ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվականի N 1

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՖԻԴԱՅԻՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԻ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Ռազմիկի Այվազյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոցի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 43.47քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 38.04քմ) ավտոտնակի, 57.24քմ արտաքին մակերեսով տնտեսական սենյակի (ներքին մակերեսը՝ 50.4քմ), 12.24քմ մակերեսով աստիճանահարթակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 69.48քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ շինությունները:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի, տնտեսական սենյակի, աստիճանահարթակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը, տնտեսական սենյակը, աստիճանահարթակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոցի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ֆիդայիների փողոց, թիվ 14-1/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվականի N 2

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/1-34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԺՈՐԱ ՊԱՐՏՈԵՎԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 08-Ի ԹԻՎ 968 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժորա Պարտոևի Պետրոսյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26102020-06-0051 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ մասի ա) ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Խորենացու փողոց թիվ 2/1-34 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 20,0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26102020-06-0051 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Ժորա Պարտոևի Պետրոսյանին՝ ավտոտնակ տեղադրելու նպատակով:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ժորա Պետրոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար վարձավճարի չափը ամսական սահմանելով 24 (քսանչորս) դրամ:
3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 08 հուլիսի 2010 թվականի «Ավտոտնակի ամրակցման համար տրամադրված հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և Ժորա Պետրոսյանին կառուցապատման իրավունքով հողամաս վերահատկացնելու մասին» թիվ 968 որոշումը՝ 16.07.2010թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 376 պայմանագիրը համարելով լուծված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 11
Ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվականի N 3

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳՈՒՐԳԵՆ ՌՈՒՇԱՆԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գուրգեն Ռուշանի Ասլամազյանի դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից տրված թիվ ՄՏ-21122020-06-0352 միասնական տեղեկանքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1079135 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Իսրայել Օրի փողոց թիվ 8ա հասցեում գտնվող, Գուրգեն Ռուշանի Ասլամազյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Իսրայել Օրի փողոց, թիվ 8-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվականի N 4

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 54/1-23Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալլա Հարությունի Պողոսովայի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1131563 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման 46-րդ կետի դ) ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 54/1-23գ հասցեում գտնվող, ավտոտնակի զբաղեցրած 18.76քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2030թ. դեկտեմբերի 30-ը:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ալլա Պողոսովայի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 18.76քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ վարձավճարի չափը 1.0քմ մակերեսով հողամասի համար սահմանելով ամսական 12 (տասներկու) դրամ:

3. Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոցի թիվ 54/1-23գ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մոսկովյան փողոց, թիվ 54/1-23/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 11
Ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվականի N 5

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 65/2-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Արամի Խաչատրյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 02122020-06-0006 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ 02.12.2020թ. թիվ ԱՏ-02122020-06-0373 տեղեկանքը, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով՝ **որոշում եմ.**

Կադաստրային քարտեզում կատարել ուղղում՝ Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 65/2-1 հասցեում գտնվող 0.004հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից հաստատել որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողեր և գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների հողերից՝ որպես հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվականի N 6

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 77-43/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՀԱՐՈՆ ԼՅՈՎԱՅԻ ՀՈՎՀԱՆԵՍՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ահարոն Լյովայի Հովհանեսյանի լիազորված անձ Աննա Լևոնի Առաքելյանի դիմումը, 04.12.2019թ. տրված թիվ 93 լիազորագիրը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16122020-06-0011 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի զ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 77-43/5 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 23.2քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 22.18քմ) ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 23.2քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով, տրամադրել Ահարոն Լյովայի Հովհանեսյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ահարոն Հովհանեսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի՝ 1.0քմ-ի համար ամսական 30 (երեսուն) ՀՀ դրամ վարձավճարով և հողամասի՝ 1.0քմ-ի համար ամսական 24 (քսանչորս) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվականի N 7

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁԵՅԹՈՒՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 53/1-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՐՅՈԺԱ ՀՐԱՉԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերյոժա Հրաչիկի Հովակիմյանի դիմումը, Վանաձոր քաղաքային համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03122020-06-0001 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ մասի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Ձեյթունի փողոց թիվ 53/1-1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 19.5քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձորի քաղաքային համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03122020-06-0001 վկայականի, կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Սերյոժա Հրաչիկի Հովակիմյանին՝ խանութ կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սերյոժա Հովակիմյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.5քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2021 թվականի N 8

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15-1/7, Մ.ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15-1/22 ԵՎ ԹԻՎ 17-1/4 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՀԵ ՍԱՄՎԵԼԻ ՄՈՍՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահե Սամվելի Մոսոյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14042016-06-0048, թիվ 07032017-06-0026 և թիվ 03072020-06-0048 վկայականները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Գորկու փողոց թիվ 15-1/7, Մ.Գորկու փողոց թիվ 15-1/22 և թիվ 17-1/4 հասցեներում գտնվող Վահե Սամվելի Մոսոյանին սեփականության իրավունքով պատկանող 44.71քմ ընդհանուր մակերեսով հողամասերը և 12.76քմ մակերեսով գույքը՝ համաձայն ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մ.Գորկու փողոց, թիվ 15-1/7 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2021 թվականի N 9

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 59/1 ԵՎ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 59/4 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՉԵ ՀՈՎԻԿԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաչե Հովիկի Վիրաբյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1453393 և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23062020-06-0035 վկայականները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Նարեկացի փողոց թիվ 59/1 և Նարեկացու փողոց թիվ 59/4 հասցեներում գտնվող Վաչե Հովիկի Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող 210.0քմ ընդհանուր մակերեսով հողամասերը և 20.8քմ մակերեսով մառանը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 24-2 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2021 թվականի N 10

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 67Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՌԱՖԻԿ ՔԵՐՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԵՏՈՆԻ ՀԱՆԳՈՒՅՑԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆիկ Արտուշի Քերոբյանի լիազորված անձ Արա Ալբերտի Աղաբեկյանի դիմումը, 04.09.2018թ. թիվ 3284 (նոտարական ակտի կոդ: 741-20180904-79-2958885) լիազորագիրը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1738453 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Նարեկացի փողոց թիվ 67ա հասցեում գտնվող Ռաֆիկ Քերոբյանին սեփականության իրավունքով պատկանող բետոնի հանգույցին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 67/1-1 բետոնի հանգույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2021 թվականի N 11

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ՎԱՉԳԵՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Վազգենի Սուքիասյանի (ծնված՝ 03.12.1962թ.) դիմումը, 12.03.1992թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 21.08.2020 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2512 (նոտարական ակտի կոդ: 594-20200823-84-4680306) վկայագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մաշտոցի փողոց թիվ 50 հասցեում կառուցված բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 406.0քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1992թ. և դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 406.0քմ:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սեյրան Վազգենի Սուքիասյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մաշտոցի փողոց թիվ 50 հասցեում գտնվող օրինական 406.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Մաշտոցի փողոց թիվ 50 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մաշտոցի փողոց, թիվ 50/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2021 թվականի N 12

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՖԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15 ՀՈՒԼԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1289 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր համայնքի փողոցների լուսավորության գրաֆիկը՝ համաձայն հավելվածի:

2. Գրաֆիկի հսկողությունը հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կարեն Պառավյանին:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 15 հուլիսի 2019 թվականի «Վանաձոր համայնքի փողոցների լուսավորության գրաֆիկը հաստատելու և Վանաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 20-ի թիվ 363-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1289 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 13

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 1882 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 09-ի թիվ 1882 որոշումը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 09-ի «Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-3, թիվ 15 շենքի հարավարևմտյան մասում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1882 որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «0,06261» թիվը փոխարինել «0,006261» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 14

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2255 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 16 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 2255 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 8-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 դեկտեմբերի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոց թիվ 30/55 հասցեում գտնվող, Սեդա Աշխարհբեկի Մաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող տաղավարի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի վարձավճարի չափը փոփոխելու, նոր վարձավճար սահմանելու և պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 2255 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետում «ամսական 600 (վեց հարյուր)» բառերը փոխարինել «տարեկան 800 (ութ հարյուր)» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 15

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՌՎԱ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 2-1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՈՒՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրեն Սամվելի Վիրաբյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25122020-06-0002 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ մասի ա) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 15-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի թիվ 2-1/3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 19.9քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25122020-06-0002 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Սուրեն Սամվելի Վիրաբյանին՝ ծածկարան կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սուրեն Վիրաբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.9քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 100 (հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 16

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՌՎԱ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 2-1/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՔՍԵԼ ԱՐՏԱԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աքսել Արտակի Սարիբեկյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25122020-06-0001 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ մասի ա) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 15-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի թիվ 2-1/4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 19.9քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25122020-06-0001 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Աքսել Արտակի Սարիբեկյանին՝ ծածկարան կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Աքսել Սարիբեկյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.9քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 100 (հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 17

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՌՎԱ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 2-1/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՇՈՏ ՀՐԱՆՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Հրանտի Խաչատրյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25122020-06-0003 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ մասի ա) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 15-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի թիվ 2-1/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 19.9քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25122020-06-0003 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Աշոտ Հրանտի Խաչատրյանին՝ ծածկարան կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Աշոտ Խաչատրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.9քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 100 (հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 18

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15-13 ԵՎ ԹԻՎ 15-13/3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աննա Սերյոժայի Մաթևոսյանի և Արեն Սերյոժայի Արսենյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20112020-06-0039 և թիվ 06052020-06-0048 վկայականները, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, 08.12.2020թ. տրված տեղեկանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց թիվ 15-13 և թիվ 15-13/3 հասցեներում գտնվող, Աննա Սերյոժայի Մաթևոսյանին և Արեն Սերյոժայի Արսենյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0,01247հա մակերեսով հողամասերը և դրանց վրա գտնվող 218.55քմ մակերեսով շինությունները՝ համաձայն ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Բաթումի փողոց, թիվ 15-13/3 բնակելի տուն և ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 19

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 43-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԱՎԻԹ ԻՍՐԱՅԵԼԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Իսրայելի Դավթյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01062013-06-0004 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման 46-րդ կետի դ) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 43-2 հասցեում գտնվող, Դավիթ Իսրայելի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող խանութի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 5.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Դավիթ Իսրայելի Դավթյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 5.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ վարձավճարի չափը 1.0քմ մակերեսով հողամասի համար սահմանելով ամսական 800 (ութ հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 20

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 239
ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի 03 նոյեմբերի 2020 թվականի թիվ ՎԴ/1653/05/20 վարչական գործով վճիռը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Անվավեր ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 06 փետրվարի 2020 թվականի «Ալեքսան Կիմի Գալոյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 239 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 21

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 14 շենքի հյուսիսային մասում գտնվող 0.006հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 12/26-1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 22

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 21 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴՄՈՆ ՌՈՄԵՈՒ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդմոն Ռոմեոի Քոչարյանի (ծնված՝ 30.12.1983թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 31.05.1976թ. տրված գույքային թերթը, 28.08.2020թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2964 (նոտարական ակտի կոդ: 763-20200828-84-4690409) վկայագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 11.12.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-174/20 Ի եզրակացությունը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց թիվ 21 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 472.80քմ և կից 14.20 մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1955-1970թ.թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 487.0քմ:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Էդմոն Ռոմեոի Քոչարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց թիվ 21 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 472.80քմ մակերեսով հողամասին կից 14.20 մակերեսով հողամասերի նկատմամբ:
2. Ճանաչել Էդմոն Ռոմեոի Քոչարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց թիվ 21 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 487.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Կնունյանց փողոց, թիվ 21/1-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՄԵՐԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 23

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 73 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱԼԻՆԱ ՀԱՅԿԻ ՄԱՄՈՒԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պալինա Հայկի Մամուլյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12082020-06-0009 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 09.09.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-124/20 Ի եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Հակոբյան փողոց թիվ 73 հասցեում գտնվող Պալինա Հայկի Մամուլյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած 0.0684հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Ճանաչել օրինական Պալինա Հայկի Մամուլյանին սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի Հակոբյան փողոց թիվ 73 հասցեում գտնվող 0.0684հա մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 314.34քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունները:
3. Պալինա Հայկի Մամուլյանին կողմից օրինականացման համար սահմանված վճարը 314.34քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար 660120 (վեց հարյուր վաթսուն հազար հարյուր քսան) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Հաստատել սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Հակոբյան փողոց, թիվ 73 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունվարի 13
ք.Վանաձոր